

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՆԱ ԿԱՐԱՊԵՏԻ ՀԱԿՈՔՅԱՆ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՄԱՍՏԱՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ

ԱՐՏԱՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

(1915թ. իրադարձությունների վերաբերյալ

ԱՄՆ պաշտոնական խոսույթի հիման վրա)

Ժ 02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան
պետական լեզվահասարակագիտական համալսարանում
Գիտական դեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս. Տ. Զոլյան

Պաշտոնական բանասիրական գիտությունների դոկտոր,
ընդդիմախոսներ՝ **Լ. Ս. Հովսեփյան**

բանասիրական գիտությունների թեկնածու,
Ռ. Ա. Սանթրոսյան

Առաջատար

ազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսար

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. հունիսի 6-ին՝ ժամը 15⁰⁰-ին ՀՀ
ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝
Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մայիսի 6-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Ն. Մ. Սիմոնյան**

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերջին ժամանակներում լեզվաբանության մեջ ձևավորված ճանաչողական լեզվաբանության մի շարք խնդիրների վերախմաստավորմամբ: Մույն ատենախոսության արդիականությունը հիմնականում պայմանավորված է լեզվաբանական նոր ուղղության ուսումնասիրությամբ: Առաջին անգամ հայ լեզվաբանության մեջ իրադարձությունը դիտվում է որպես քերականական միավոր, որպես լեզվական միջոց, որը հնարավորություն է ընձեռում վերլուծելու և նկարագրելու նախադասության խորքային իմաստը: Իրադարձությունների իմաստաբանության ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտելու այս կամ այն խոսույթի՝ տվյալ իրավիճակին համապատասխանող իմաստը. 1915 թվականի իրադարձությունները՝ որպես քերականական միավորներ, արտապատկերվում են ԱՄՆ քաղաքական խոսույթի մեջ, իսկ ցեղասպանության 100-րդ տարելիցով պայմանավորված՝ ցեղասպանագիտության շուրջ իրականացվող գիտական տարբեր հետազոտությունները մեծ կարևորություն են ստանում: Հայ լեզվաբանական հետազոտությունների շրջանակներում այս խնդիրը միայն վերջերս է սկսել ուսումնասիրվել: Դրա վերաբերյալ առաջին համապարփակ ուսումնասիրությունը Ս. Գասպարյանի «Հայոց ցեղասպանությունը, լեզվաճանաչողական մեկնակետ» աշխատությունն է¹:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է բացահայտել *իրադարձություն* հասկացությունը և ներկայացնել դրա արտապատկերման միջոցները ԱՄՆ քաղաքական խոսույթում: Ատենախոսության նպատակին հասնելու համար աշխատանքում առաջ են քաշվում հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել ԱՄՆ՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները, վճիռ-բանաձևերը և ամենամյա ապրիլքսանչորսյան նախագահական ուղերձները:

2. Վեր հանել դրանցում ներկայացված համատեքստային և իրադրային կադապարները, որոնք ներկայացնում են 1915 թվականի անագորույն իրադարձությունները:

¹ Gasparyan S., The Armenian Genocide; A Lingoucognitive perspective, Yerevan, Yerevan State University press, 2014, 206 p.

3. Վերլուծել այդ իրադարձությունները իմաստաշարահյուստրեն՝ ներկայացնելով նաև այն բառային միավորները, որոնք վերաբերում են այդ իրադարձություններին:

4. Բացահայտել ԱՄՆ քաղաքական խոսույթի իմաստային առանձնահատկությունները ցեղասպանության ճանաչման համատեքստում:

Ատենախոսության տեսական-մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության տեսական նշանակությունը պայմանավորված է հետազոտության առարկան բազմակողմանի վերլուծության ենթարկելու անհրաժեշտությամբ: Ատենախոսության մեջ կիրառվել են հիմնականում որակական հետազոտության մեթոդներ՝ խոսույթի վերլուծություն, հայտարարության վերլուծություն, իմաստաբանական և իմաստաշարահյուսական վերլուծություն:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Ատենախոսության նորույթը այն համալիր ուսումնասիրությունն է, որտեղ մեկտեղվում են իմաստաբանությանը, իմաստաբանական շարահյուսությանը, քաղաքական խոսույթի վերլուծություններին և ԱՄՆ գաղափարախոսությանը վերաբերող տեսությունները: Ատենախոսության գործնական նշանակությունը քերականական նոր երևույթի բացահայտումն է, որը առավել կհեշտացնի հետագա նմանատիպ վերլուծությունները նաև ուսումնական գործընթացում: Գործնականորեն կարևորվում են նաև այն մեխանիզմները, որոնք առաջադրվում են խոսույթի բնագավառում իմաստաբանական հետազոտություններ իրականացնելիս: Այս տեսության լույսի ներքո բառագիտության դասավանդումը և բառիմաստների ուսումնասիրությունը դառնում են էլ ավելի պարզ, իսկ քաղաքագիտության բնագավառում գործնականում առավել հեշտ է դառնում բացահայտել տվյալ քաղաքական խոսույթի տեսակը և գործնական հնարավոր քաղաքագիտական կիրառումը: Ներկայացված խնդիրների ուսումնասիրությունը և լեզվաբանական վերլուծությունները քաղաքական խոսույթում, կատարված լինելով վերը նշված երկու ուղղությունների համադրությամբ, կարող են օգտակար լինել իմաստաբանական և շարահյուսական հետագա ուսումնասիրությունների, ինչպես նաև քաղաքական խոսույթի վերլուծությունների համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է Երևանի Վ. Բրյուտովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի «Լեզվաբանության և հաղորդակցման տեսության» ամբիոնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Թեմայի հիմնադրույթներն արտացոլված են տպագրված չորս գիտական հոդվածներում:

Ատենախոսության բովանդակությունն ու կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է ուսումնասիրության նպատակներով և խնդիրներով: Այն կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, փաստագրությունը և պաշտոնական որոշումները, էլույթները ընդգրկող հավելվածից, գրականության և այլ աղբյուրների ցանկից:

Ներածության մեջ ներկայացրել ենք ատենախոսության ընդհանուր բնութագիրը՝ անդրադառնալով իրադարձության՝ որպես քերականական միավոր լինելու գաղափարին, «իրադարձությունների իմաստաբանության» տեսությանը, ճանաչողական լեզվաբանության այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են *իրադրային կաղապար*, *հասկացույց* հասկացությունները: Այնուհետև անդրադառնում ենք քաղաքական խոսույթի վերլուծության եղանակներին՝ ճանաչողական կաղապարների հայեցակետից: Ըստ այսմ՝ համառոտ անդրադարձ է կատարվում խոսույթի տեսակներին՝ ներկայացնելով խուսանավող խոսույթի տեսակը: Այն մասնավորապես բացահայտվում է 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ ԱՄՆ պետական դիրքորոշումներում: Ներածության մեջ քննվում են հիմնականում տարբեր հեղինակների մոտեցումները քաղաքական խոսույթի վերլուծության, իրադարձությունների իմաստաբանության և լեզվական խուսանավման միջոցների վերաբերյալ (D. Dabidson 1967, G. McCawley 1968, H. Rappaport & B. Levin 1998, J. Grimshaw 1990, R. Jackendoff 1990, J. Pustejovsky 1991, F. van Emmeren & P. Houtlosser 2001, D. Zarefsky 2006, S. Gasparyan 2014, Ս. Ջոյան 2015):

Ատենախոսության առաջին՝ **«Իրադարձությունը և դրա արտապատկերման միջոցները»**, գլխուխը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ «Իրադարձության հասկացությունը լեզվաբանական տեսություններում», քննության են առնված լեզվաբանական տեսություններում իրադարձությունների՝ որպես քերականական միավորներ լինելու փաստը: Ներկայացվում են իրադարձությունների վերաբերյալ տարբեր լեզվաբանների տված սահմանումներն ու նկարագրման, վերլուծության միջոցները: Սույն ենթագլխի տեսական հիմքը հիմնականում կազմում են Դ. Դեյվիդսոնի, Դ. Դոուրթի, Ռ. Ջեյկենդոֆի, Ջ. Պուստեյովսկու, Հ. Ռեփորթի և Բ.Լևինի, Ջ. Հիգգինբոթամի, Թ. Փարոնսի, Ջ. Սքրոլիի, Ջ. Գրուբերի, Չ. Ֆիլմորի իրադարձությունների լեզվաբանական արտապատկերման միջոցների վերաբերյալ ուսումնասիրությունները:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ բարդ իրադարձությունները կազմված են ներքին և արտաքին իրադարձություններից. արտաքին իրա-

դարձությունը կապված է պատճառականության (causation) և ներգործության (agency) հետ, իսկ ներքին իրադարձությունը կապված է իրավիճակի փոփոխության կամ նպատակաուղղվածության (telicity) հետ².

[[outer event] արտաքին իրադարձություն [inner event]] ներքին իր.

Causation /agency

change of state/telicity

Պատճառականություն/ ներգործություն

վիճակի փոփոխություն

Այս տեսանկյունից “John sliced the bread“ (Ջոնը կտրատեց հացը) նախադասության մեջ պրեդիկատը բաղկացած է ներքին և արտաքին իրադարձություններից: Ներքին իրադարձությունը նպատակ արտահայտող իրադարձությունն է, որում *հացը* ենթարկվում է իրավիճակի փոփոխության: Իսկ արտաքինն այն իրադարձությունն է, որում Ջոնը հանդես է գալիս որպես ազենտ (իրադարձության կատարողը): Եվ քանի որ արտաքին իրադարձությունը պատճառ է ներքինի համար, ապա այն հարաբերվում է պատճառականության հետ: Պատճառականությունն ասելով հասկանում ենք մի երևույթ, երբ պատճառը որոշակի պայմանների առկայության դեպքում անհրաժեշտաբար առաջ է բերում մյուսը՝ հետևանքը (կամ գործողությունը): Պատճառականությունը լեզվաբանորեն ներկայացվում է որպես հարաբերություն կա՛մ երկու պրոպոզիցիոնալ արտահայտությունների, կա՛մ երկու իրադարձությունների, կա՛մ էլ ազենտի և իրադարձության միջև³:

Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է «Բայիմաստի հայեցակերպային կառուցվածքը և իրադարձությունների դասակարգումը», հիմնականում ներկայացվում են բայիմաստի հայեցակերպային կառուցվածքը և իրադարձությունների դասակարգումը՝ հիմք ընդունելով Ջ. Վենդլերի, Ջ. Վերկույլի, Ք. Սմիթի, Է. Բախի, Ջ. Պուստեջովսկու առաջարկած դասակարգումները:

Իրադարձությունների, գործընթացների և իրավիճակների սահմանումը և ընդլայնումը քննարկվել են հատկապես ժամանակի և հայեցակերպի ուսումնասիրությունների շրջանակներում, քանի որ «իրադարձություն» հասկացությունն իր մեջ լայն և նեղ իմաստներով ներառում է թե՛ իրադարձություն, թե՛ գործողություն և թե՛ իրավիճակ: Բացի այդ՝ իրադարձությունները քննարկվել և ուսումնասիրվել են փոփոխականության և նպատակաուղղվածության տեսակետից: Իրադարձությունները և գործընթացները փոփոխական դեպքեր են, իսկ իրավիճակները՝ անփոփոխ: Տարբեր հեղի-

² Tenny C. and Pustejovsky J., (eds) Events as grammatical objects// The converging perspectives of Lexical Semantics and syntax; Stanford, Center for the study of language and information, 2000, p.7.

³ Ն ու յ և տ ե դ ու մ , էջ 8:

նակների ներկայացրած դասակարգումների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ դրանք հիմնականում դիտվում են որպես գործողություններ և սահմանվում են իմաստաբանական այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են վիճակը, ընթացքը, փոփոխությունը, վերջնակետը, ակնթարթայնությունը և այլն: Բոլոր մտտեցումները հիմնվում են վենդլերյան դասերի վրա՝ ընդարձակելով կամ սահմանափակելով դրանք:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Քաղաքական խոսույթի վերլուծությունը և ԱՄՆ քաղաքական խոսույթի կաղապարումը»**, կազմված է երեք ենթագլխից: Սույն գլխի առաջին ենթագլխում՝ «Խոսույթի վերլուծությունը մտային կաղապարների հայեցակետից», քննության են առնվել խոսույթի վերլուծության տարբեր մեթոդաբանություններ, մասնավորապես անդրադարձ է կատարվում Ս. Դեյքի առաջարկած վերլուծական միջոցներին: Նա հիմնական շեշտը դնում է մի կողմից խոսույթի կառուցվածքի, մյուս կողմից՝ տեղեկատվության ընկալման ճանաչողական մեխանիզմների վրա: Ս. Դեյքը խոսույթը դիտարկում է որպես լեզվաբանական ձևի, նշանակության և գործողության բարդ միասնություն⁴:

Ս. Դեյքի վերլուծության մեջ կարևոր հասկացություն է *մտային կաղապարը*, որպես տվյալ մշակույթում գիտելիքների ճանաչողական մեկնաբանման որոշակի համակարգ: Նա գտնում է, որ խոսույթի հասարակական գործունեությունը և ընկալումը, հետևաբար նաև արդյունավետությունն ու մեկնաբանությունը հիմնված են հատուկ իրավիճակների մտային նկարագրության վրա: Պլանավորել գործողությունը նշանակում է կառուցել ապագայում կատարվելիք գործողությունների կաղապար⁵: Ս. Դեյքն այս կաղապարները դիտարկում է որպես ճանաչողական մեկնաբանման վերաբերային հիմք: Լեզվակիրները հաղորդակցման ընթացքում ոչ միայն կառուցում և ձևավորում են իրադարձությունների կամ իրավիճակների կաղապարներ, այլև ստեղծում են հաղորդակցական իրադարձություն, որին իրենք մասնակցում են: Այստեղ գործի է դրվում կաղապարների մի հատուկ տեսակ՝ *համատեքստային կաղապարը*: Խոսքային իրադարձությունը կամ իրավիճակը, այսինքն՝ համատեքստը, անհրաժեշտաբար չի տարբերվում այլ իրադարձություններից կամ գործողություններից, որին մասնակցում են մարդիկ: Համատեքստային կաղապարները, ըստ Ս. Դեյքի, վճռական դեր են

⁴ Dijk T. Van Discourse, context and cognition // Discourse Studies. № 8 (1). 2006, p.165.


⁵ Дейк Т.А. ван. и Кинч В. Стратегии понимания связного текста // Новое в зарубежной лингвистике. Вып. 23. -М.: 1989, стр 141.

կատարում խոսույթում և առհասարակ հաղորդակցական գործընթացում: Այս կաղապարները ներկայացնում են իրադարձություններ, իրավիճակներ, ինչպես նաև խոսույթի մասնակիցներ:

Համատեքստային կաղապարների համեմատությամբ *իրադրային կաղապարները* ներկայացնում են խոսույթի անհատական մեկնաբանությունը, արդյունավետության մտային սկզբնակետը և այն, թե ինչ են հետագայում հիշում մարդիկ այդ խոսույթից: Այն տեղեկատվությունը, որ ներկայացվում է իրադրային կաղապարներում ընդհանրացման և վերացարկման միջոցով, սոցիալական ընդհանուր գիտելիքի հիմքն է: Հասկացողության ընթացքում այս կաղապարները կառուցվում են այն տեղեկատվությունից, որը սերում է խոսույթից և սոցիալ-մշակութային գիտելիքից: Տ. Դեյքը անդրադառնում է իրադրային կաղապարներին՝ նշելով, որ խոսույթի համընդհանուր իմաստը կարող է կառուցվել սխեմատիկ կառույցներով⁶: Իրադրային կաղապարները ներկայացնում են խոսույթի անհատական մեկնաբանությունը: Այն տեղեկատվությունը, որ պահվում է իրադրային կաղապարներում, սոցիալական ընդհանուր գիտելիքի հիմքն է: Փաստորեն խոսույթի արդյունավետության համար պետք է ունենալ այսպիսի մի համակարգ.

ԽՈՍՈՒՅԹ

Համատեքստային կաղապար
Համատեքստ, որտեղ ներկայացվում է
իրադարձությունը


Իրադրային կաղապար
Պատմական այն իրադարձությունը,
որը քննարկման առարկա է

Երկրորդ ենթազվխում, որը վերնագրված է «Ամերիկյան քաղաքական խոսույթը 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ՝ մտային կաղապարների հայեցակետից» քննության ենք առնում *Ամերիկայի Միացյալ Նահանգների* հրատարակած պաշտոնական տարբեր փաստաթղթերը, ամենամյա նախագահական ուղերձները, որոնք անդրադառնում են 1915 թվականի պատմական իրադարձություններին: 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ ԱՄՆ նախագահներն արտահայտում են իրենց վերաբերմունքը, ներկայացնում ԱՄՆ կառավարության պաշտոնական դիրքորոշումը, որն արտահայտում է ազգի արժեքային համակարգն ու գաղափարախոսությունը: Կաղապարները կազմում են քաղաքական գործունեության ճանաչողական հիմքը և խմբի ու կազմակերպությունների ընդհանուր նկարագրությունների քաղաքական մակրոկառուցվածքները (ուժը, իշխանությունը) հարաբերում քաղաքական գործիչների գործունեությունների քաղա-

⁶ Dijk T.A., van . Racism and the press, Routledge, *Critical studies in racism and migration* New Fetter Lane, London, 1991, p 206.

քական միկրոկառուցվածքին (կիրառած լեզուն, խոսքային փոխազդեցությունը, միջավայրը):

Ենթադրվում է, որ խոսողները կառուցում են տվյալ իրավիճակի և իրադարձության մտային կաղապարները: Դրանք ներկայացնում են հայթուրքական հարաբերությունները և 1915 թվականի ողբերգական իրադարձությունները՝ արտահայտելով խոսողների անձնական վերաբերմունքն ու կարծիքները տվյալ իրադարձությունների վերաբերյալ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները և ամենամյա նախագահական ուղերձները քաղաքական խոսույթի տեսանկյունից կաղապարել ենք հետևյալ կերպ.

Օրինակ՝ Մենաստի թիվ 12 համատեղ վճիռ-որոշում, 1916թ.

Whereas the people of the United States are deeply impressed by the deplorable conditions of insecurity, starvation, and misery now prevalent in Armenia (US Senate Concurrent Resolution 12) – Նկատի ունենալով, որ Միացյալ Նահանգների ժողովուրդը խորապես ցնցված է Հայաստանում տիրող անսպառնալիության, սովի, տառապանքի սարսափելի պայմաններից:

Այստեղ հստակ արտահատված է ԱՄՆ գաղափարախոսական կաղապարը՝ *Միացյալ Նահանգները խորապես ցնցված է ներկայումս Հայաստանում առկա քաղցի, անսպառնալիության, դժբախտության պայմաններից:*

Նշված իրադարձությունները կկաղապարվեն հետևյալ կերպ.

Համատեքստային կաղապար՝ խոսքային իրադարձություն: Սույն վճռում կառուցվում է համատեքստային մի կաղապար՝ խոսքային իրադարձություն, որը տեղի է ունեցել 1916 թվականի փետրվարի 10-ին և իր արտահայտությունն է գտել Մենաստի 12-րդ համատեղ որոշման մեջ: Խոսույթն իրականանում է Ներկայացուցիչների պալատում, մասնակիցներն են 64-րդ համագումարի առաջին նստաշրջանին ներկա անձինք:

Պատմական իրադարձություն: Այդ ժամանակաշրջանում Հայաստանում առկա է անսպառնալիության, քաղցի, դժբախտության թշվառ իրավիճակ: Իրադարձային կաղապարը կառուցվում է Միացյալ Նահանգների ընդհանրական գաղափարախոսությամբ՝ *մենք*-ի անունից: Այն կաղապարվում է Միացյալ Նահանգների՝ տվյալ իրադարձության վերաբերյալ ունեցած վերաբերմունքի ու կարեկցանքի մտային կաղապարով (*..the people of the United States of America have learned with sorrow of this terrible plight of great numbers of human beings and have most generously responded to the cry for help whenever such an appeal has reached them.*): Մեծաքանակ մարդկանց այդ թշվառ

կացությունը մեծ վիշտ և տխրություն է պատճառել Միացյալ Նահանգների ժողովրդին, և վերջիններս մեծահոգաբար առաջարկում են իրենց օգնությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ԱՄՆ՝ ցեղասպանության վերաբերյալ որոշումներում և արձանագրություններում մեծապես շեշտվում է նախագահների՝ սույն հարցի վերաբերյալ դիրքորոշումների և վերջիններիս ամենամյա ապրիլքսանչորայան ելույթների կարևորությունը իրենց որակմամբ նաև այս դաժան ու վայրագ իրադարձությունների վերաբերյալ (...to ensure (2) **in the President's annual message commemorating the Armenian Genocide to characterize the systematic and deliberate annihilation of 1.5 million Armenians as genocide, and to recall the proud history of U.S. intervention in opposition to the Armenian Genocide** - H. Res. 106): /Հավաստիանալ, որ ԱՄՆ նախագահի՝ Հայոց ցեղասպանությունը վկայակոչող ամենամյա ուղերձը 1,5 մլն. հայերի համակարգային և միտումնավոր բնաջնջումը կորակի որպես ցեղասպանություն/:

Տարբեր ժամանակաշրջաններում ԱՄՆ բոլոր նախագահները իրենց նախագահության օրոք ցեղասպանության յուրաքանչյուր տարելիցին ընդառաջ կառուցում են իրենց դիրքորոշումների մտային կաղապարը 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ՝ արտահայտելով իրենց անձնական վերաբերմունքը, կարծիքները, ինչպես նաև *մենք*-ի՝ ԱՄՆ ազգի գաղափարախոսությունը սույն իրադարձությունների վերաբերյալ: Օրինակ՝ ներկայիս նախագահ Բ. Օբամայի ուղերձները շարունակաբար կաղապարվում են տարիներ առաջ տեղի ունեցած դաժան իրադարձությունների վերաբերյալ անձնական մտային կաղապարներով: Ինչպես գրեթե բոլոր նախագահների ելույթներում, այստեղ ևս համատեքստային կաղապարում առկա խոսքային իրադարձության մեջ ներկայացված են հայ-ամերիկյան համայնքին վերաբերող դրույթներ և տվյալ իրավիճակին վերաբերող խոսքային իրադարձություններ: Ուշագրավ է, որ բարդ իրադարձության մեջ հանդես եկող պատմական իրադարձություններին Բ. Օբաման տալիս է *վատագույն* կամ *մեծ դաժանություն* անվանումները՝ որպես խոսքային իրադարձություն (1.5 million Armenians were massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire; Each year, we pause to remember the 1.5 million Armenians who were subsequently massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire): Ելույթների երկրորդ մասում Բ. Օբաման կառուցում է անձնական մտային կաղապար, որը նպատակաուղղված է հնարավոր հաշտեցման քաղաքականությանը: Փորձ է կատարվում հաշտության եզրեր գտնել Հայաստանի և Թուրքիայի միջև՝ այդպիսով զերծ

մնալով կողմնապահությունից: Նա իր ելույթում արտահայտում է իր վերաբերմունքը Մեծ եղեռնի ժամանակ զոհվածների հիշատակի վերաբերյալ և իր ուղերձում կաղապարում հայ ժողովրդի ունեցած ավանդը, ձիրքը, տոկունությունը, ինչպես նաև ամերիկահայ համայնքի ունեցած ներդրումն իրենց պետության զարգացման գործում ("The United States of America is a far richer country because of the many Americans of Armenian descent who have contributed to our society, many of whom immigrated to this country in the aftermath of 1915". Today, I stand with them and with Armenians everywhere with a sense of friendship, solidarity, and deep respect.):

Երրորդ ենթագլխում, որը վերնագրված է «Ցեղասպանության ճանաչման ռազմավարությունները: ԱՄՆ խուսանավող խոսույթ», առավել մանրամասն ներկայացվում է խոսույթի խուսանավող տեսակը, որը դեռևս նորույթ է խոսույթի ուսումնասիրության բնագավառում, և որը հայ լեզվաբանական իրականության մեջ առաջին անգամ ուսումնասիրվել է Ս. Ջոյանի համապատասխան աշխատության մեջ: Բացի այդ՝ քննում ենք նաև քաղաքական խոսույթի խուսանավման ռազմավարությունները՝ առաջարկված Ֆ. Էմերենի, Պ.Հոուլթոսերի, Դ. Ջարևսկու կողմից: Խուսանավող խոսույթի ուսումնասիրությունները պետք է դառնան անհրաժեշտ ուսումնասիրության և համարժեք արձագանքի առարկա: Հարկ է բացահայտել անուղղակի բանավեճը՝ որպես խուսանավելու խոսույթային ռազմավարությունների բացահայտման և վերախմբավորման պահանջ՝ ենթադրյալն ու կանխավարկածները դարձնելով տեքստ և հստակեցնելով երկիմաստ արտահայտությունները: Ս. Ջոյանը նշում է, որ խուսանավող խոսույթը կարող է ավելի վտանգավոր լինել, քան ժխտողականը, քանի որ այն ոչ մի բան չի հերքում, ոչ էլ հաստատում է՝ այդպիսով գերծ մնալով ճշմարտացիացման կամ հերքման ընթացակարգերից⁷:

Կատարելով ԱՄՆ պաշտոնական հայտարարությունների ու նախագահական ուղերձների վերլուծություն մտային կաղապարների հայեցակետից՝ գալիս ենք այն եզրակացության, որ քաղաքական խոսույթի վերլուծության ժամանակ միայն լեզվական գործոնները բավարար չեն, պետք է անպայման հաշվի առնվեն խոսույթի հիմք հանդիսացող մտային գործընթացները՝ կաղապարները: Մտային և գաղափարախոսական կաղապարների հիման


⁷ Ջոյան Ս., ԱՄՆ Նախագահները հայոց ցեղասպանության մասին (Խուսանավող դիսկուրսի խնամագործարանակ վերլուծություն), Երևան, «Լիմուշ» հրատ., 2015, էջ 8:

վրա բացահայտվում են ԱՄՆ՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների առանձնահատկությունները և ըստ այդմ՝ ԱՄՆ խուսանավող խոսույթի հիմնական բնութագրիչները:

Աշխատանքի երրորդ գլուխն ամբողջությամբ ներկայացնում է ԱՄՆ քաղաքական խոսույթում ներկայացված 1915 թվականի իրադարձությունների խորքային վերլուծությունը: Այն վերնագրված է **«1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ ամերիկյան պաշտոնական հայտարարությունների իրադրային վերլուծություն»:** Առաջին՝ «Իրադարձությունների ներկայացման խորքային կաղապարը ամերիկյան քաղաքական խոսույթում» ենթագլխում ԱՄՆ սենատի վերաբերյալ վճիռ-որոշումներում ներկայացվում է մարդկանց սարսափելի կացությունը, և իրադարձությունների կառուցվածքային և իմաստաբանական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում վեր հանել խոսույթի խորքային կառուցվածքը: Վերը ուսումնասիրված նոր մոտեցումները թույլ են տալիս եզրակացնելու, որ խոսույթը ներկայացնող տեքստերի կաղապարումը հնարավորություն է տալիս արտապատկերելու իրադարձությունների խորքային իմաստատրամաբանական կառուցվածքը, տեղագրական կառուցվածքը (topological structure)՝ ասույթի գործողության ժամանակն ու վայրը, ինչպես նաև մասնակիցների մտային կառույցները՝ գիտելիք, նպատակ, վերաբերմունք և այլն:

Ըստ այսմ՝ ներկայացվում է վճիռների ու որոշումների իրադրային վերլուծությունը, որն օգնում է բացահայտելու ԱՄՆ խուսանավող խոսույթի առանձնահատկությունները՝ լեզվաբանական, մասնավորապես՝ իմաստաշարահյուսական հայեցակարգից:

Մենատի 12-րդ համատեղ որոշման մեջ ներկայացվող իրադարձությունները հնարավոր է արտապատկերել որպես՝



Հիմա (այդ ժամանակ) Հայաստանում առկա է տառապանք, անապահովություն.

1. Starvation is prevalent in Armenia now.
- 1.1 Starvation- to starve
- Who becomes starved?

Իրադարձությունը ներկայացված է *քաղցել (to starve)* բայով: Ընդարձակ իրադրային կառույցում բայի իրադրային փոփոխակը սահմանվում է առանձին արգումենտային տրամաբանական չափորոշի միջոցով և կոնկրետ տրամաբանական պրեդիկատով: Արգումենտային կառույցը (կառուցվածքային մեկնաբանության մեջ այսուհետ՝ ARGSTR), կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

1. Starve

ARGSTR = ARG1 = State

ARG2 = place (ARG- Argument)


S-ARG1 = people

CAUSE պրեդիկատի առաջին արգումենտում ներկայացվում է *քաղցի* իրավիճակը, երկրորդ արգումենտում՝ վայրը, որտեղ առկա է այդ իրավիճակը, իսկ արդեն սովերային (թաքնված) արգումենտում ունենում ենք *քաղցած ժողովուրդ՝ X CAUSE y (Armenian people) BECOME (starved) e*:

Իմաստաբանական ազենտը մեկ շարահյուսական մակարդակով իջնում է, այսինքն՝ գլխավոր անդամից դառնում է երկրորդական, և հանգում ենք իրավիճակային քերականության այն մտքին, որ ցուցային արտահատությունները կարող են ներկայացնել ինչպես գործողության վայրն ու ժամանակը, այնպես էլ հասարակական դերեր ու հարաբերություններ: Այնուհետև ներկայացվում է անապահովության իրադարձությունը.

2. Insecurity is prevalent in Armenia now.

2.1 Insecurity -to endanger

Who endangers?  Who becomes endangered?

Ստեղծված անապահով իրավիճակը ներկայացրել ենք *վտանգել (to endanger)* բայով: Ընդարձակ իրադրային կառույցում վերը նշված բայի իրադրային փոփոխակները ևս ներկայացնում ենք տրամաբանական CAUSE (ՊՍՏ&ԱՌԵԼ) և BECOME (ԴԱՌՆԱԼ) պրեդիկատներով՝ տարրաբաշխելով բայիմաստը ավելի խորքային բաղադրիչների: Արգումենտային կառույցում ունենում ենք հետևյալ պատկերը.

ARDSTR = ARG1 = State

ARG2 = place

S-ARG1 = people FORMAL

X CAUSES y /Armenian people/ BECOME insecure & endangered

Նույն իրադարձության մեջ ներկայացված է նաև *թշվառության, տառապանքի* իրավիճակը: *Հայաստանում հիմա առկա է թշվառության/տառապանքի իրավիճակ:*

Առկա է վերը նշված արգումենտային նույն կառուցվածքը, անուղղակի կերպով արտահայտված իրադարձության փաստը, իսկ թշվառության (misery)

իրավիճակի արտահայտման համար օգտագործել ենք *to suffer* (*տառապել*) բայը: Նշենք, որ բառային միավորների՝ հոմանիշների և հականիշների ընտրությունը կատարել ենք՝ հիմք ընդունելով հիմնականում *Նոր Վերաբերի բառարանը և Ռոժեի Գանձաբառարանը /Թեզաուրուս/ (New Webster's Dictionary and Roget Thesaurus, 1994)*, ինչպես նաև առցանց գանձաբառարանը (Thesaurus.com)⁸:

Եթե հետևենք Թ. Փարսոնսի՝ իրադարձությունների տրամաբանական դիտարկումներին⁹, որտեղ իրադարձությունները նկարագրվում և արտապատկերվում են տրամաբանական ասույթային շաղկապներով և քվանտորներով, ապա սույն իրադարձությունը կարելի է ներկայացնել նաև ըստ տրամաբանական նշանների.

the deplorable conditions of insecurity, starvation and misery now prevalent in Armenia.

Յե) [Agent(Յե, now) & CAUSE (e,s) & [Յե'] [insecurity, starvation, misery (e' e' e') & Theme (e' Armenia) & BECOME(e',s)]]


Այստեղ ներկայացված են ներքին իրադարձության արգումենտի (e') բաղադրամասերը, CAUSE, BECOME պրեդիկատները և իրավիճակային արգումենտը (s):

Ստեղծվել է սարսափելի կացություն (terrible plight), որում հայտնվել են մարդկային էակներ: Այս հատվածում, սակայն, CAUSE պրեդիկատի արգումենտում ներկայացված չէ գործողություն կատարող, ինչպես նաև ժամանակի կամ տեղի պարագա, որը կկատարի ազենտի դեր: Արտաքին իրադարձության մեջ փաստորեն առկա չէ իրավիճակի փոփոխության պատճառ հանդիսացող արգումենտը, բայց ներքին իրադարձության մեջ *մարդիկ հայտնվում են սարսափելի իրավիճակի մեջ*:

X CAUSES y/ great numbers of human beings/ BECOME (in) terrible plight

Իրադրային կադապարում սույն պատմական իրադարձությունները ներկայանում են որպես կոտորածներ և այլ դաժանություններ ու անգթություններ, որոնց հետևանքով տառապել են հայերը.

Բարդ իրադարձություն



Ենթաիրադարձությունը ներկայացվում է *տառապել* (*to suffer*) բայով՝ ընդարձակ իրադրային կառույցում բայի իրադրային փոփոխակները ներկա-

⁸ <http://www.thesaurus.com/03.12.2015>

⁹ Parsons, Terence. Events in the Semantics of English: a Study in Subatomic Semantics /Terence Parsons. Cambridge (Mass); London: MIT press, Cop.,1999.

յացնելով համապատասխան տրամաբանական պրեդիկատներով: Գոյություն ունի տառապանքի իրադարձություն, հայ ժողովուրդը տառապալից իրավիճակում է, սակայն այդ գործողության պատճառները, գործողությունը կատարողները և նույնիսկ վայրն ու ժամանակը չեն նշվում: Հայ ժողովուրդը տառապում է կոտորածի իրադարձություններից, որը ներկայանում է *կոտորել* (*to massacre*) բայով:

Անդրադառնալով ԱՄՆ ամենամյա ապրիլյան չորսյան ուղերձներին՝ նշենք, որ դրանցում 1915 թվականի իրադարձությունները ներկայացվում են նույն մահ, տառապանք, ցավ ու նմանատիպ իմաստներ արտահայտող բառային միավորներով: Իրադարձությունը կադապարվում է հենց այդ կոտորածներով, դաժանություններով, որոնց արդյունքում հայ ժողովուրդը տառապել է: Արտաքին իրադարձությունն այստեղ ևս ներկայացված չէ, բայց ներքին իրադարձությունը ներկայացնող կադապարի մեջ հայ ժողովուրդը տառապում է կոտորածներից ու ջարդերից:

Արտաքին իրադարձություն

Ներքին իրադարձություն

X ↓ CAUSE


հայ ժովվուրդը՝
«դառնում է տառապած»

Կոտորածների և ջարդերի հետևանքով

Ներքին իրադարձության մեջ կարող ենք առանձնացնել ևս երկու ենթաիրադարձություններ: Առաջին ենթաիրադարձությունը ներկայացնում է տառապանքի իրավիճակը, որը Ջ. Մքքոլի առաջարկած նկարագրության օրինակով մեկնաբանվում է BECOME NOT RELIEVED (հայտնվել ոչ խաղաղ իրավիճակում) բառային կառույցով: Տառապել (*to suffer*) բայի համար որպես հականիշ ծառայել է *վրկվել* (*to relieve*) բայը, որն ընտրել ենք *Նոր Վերսթերի բառարանում և Ռոջերի գանձաբառարանում* ներկայացված հականիշների շարքից (*New Webster's dictionary and Roget's Thesaurus, 727*): Երկրորդ ենթաիրադարձությունը ներկայացնում է կոտորածի իրադարձությունները և համապատասխանաբար՝ մահվան իրավիճակը, որը մեկնաբանել ենք Ջ. Մքքոլի՝ *to kill*-սպանել բային տրված նկարագրության կրկնօրինակմամբ՝ BECOME NOT ALIVE (մահանալ)

Տառապանքի իրադարձություն

Կոտորածի իրադարձություն



Իրադարձությունների կառուցվածքը բնութագրվում է տվյալ նախադասության մեջ առկա արգումենտներով: Իրադարձային կառույցը, հանդես գալով որպես բառային միավորի իմաստաբանական մակարդակներից մեկը, կիրառվում է խոսքային իմաստաբանության կառուցվածքային նկարագրության համար: Իրադարձային կառույցի շրջանակներում ներկայացվում է բայերի տարրաբաշխումը բառային հասկացության կառույցի շրջանակներում: Բառային հասկացության կառույցի միջոցով տարբերակվում են պրեդիկատների իմաստի որոշակի մասերը: Յուրաքանչյուր բայ ներկայացնում է որոշակի իրադարձություն, որը կազմված է տարբեր ենթաիրադարձություններից և հնարավոր հետևանքային իրավիճակներից: Իրադարձության մասնակիցները գտնվում են կոնկրետ իմաստաբանական հարաբերության մեջ, իսկ այդ մասնակցային դերերը համապատասխանում են բայերի արգումենտներին:

1915 թվականի իրադարձությունները հիմնականում ներկայացվում են **սպանել** կարգի բայերով: Այդ բայերը հարում են **մահ** հասկացության: *Մահ*-ը պարզ իրավիճակային պրեդիկատ է, մինչդեռ դրանից սերած բայերը անցողական պրեդիկատներ են, որոնց կատարած գործողության հետևանքով ստեղծվում է մահվան իրավիճակ:

Մեր ուսումնասիրության առարկա նոր տեսության շրջանակներում մեծ կարևորություն է ներկայացնում *իրադարձային տարրաբաշխում* հասկացությունը, որը մասնագիտական գրականության մեջ հաճախ հանդիպում է *բառային տարրաբաշխում* (lexical decomposition) անվամբ: Իրադարձային տարրաբաշխման ժամանակ պատճառականության մեջ հիմնականում ներկայացվում են երկու իրադարձություններ՝ CAUSE (ՊԱՏՃԱՌ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ) և BECOME (ԴԱՌՆԱԼ), ինչպես նաև հետևանքային իրավիճակը՝ որպես իրադարձային երրորդ բաղադրիչ: Արգումենտային կառույցում ներկայացվում են գործողություն կատարող ԱԳԵՆՏԸ, ՊԱՏՃԱՌ հանդիսացող պրեդիկատը և բարձրագույն իրադարձությունը՝ e (event-իրադարձություն):

ԱՄՆ քաղաքական խոսույթում ցեղասպանության իրադարձությունները հիմնականում արծարծվում են բուն հիշատակվող իրադարձության շրջանակներում: Հիշատակվող իրադարձության շրջանակներում 1915 թվականի իրադարձությունները ներկայացվում են հիմնականում երեք բառային հասկացության կառույցների շրջանակներում.

1) Առաջին կառույցում քննվում է *մահ* հասկացությոը, համապատասխանաբար մահվան իրադարձությունը՝ իր ենթաիրադարձություններով:

2) Երկրորդ կառույցում քննվում է *տառապանք* հասկացությոը՝ դրանից սերած իրադարձություններով:

3) Երրորդ կառույցում քննվում է *տեղափոխություն* հասկացությոը՝ իր ենթաիրադարձություններով:

1915 թվականի իրադարձությունները ներկայացնող բառիմաստների և դրանցից բխող իրադրային կառույցների վերլուծության ընթացքում կիրառվում են վերլուծական մի շարք մոտեցումներ՝ բայերի ենթաիրադրային հատկանիշները վերհանելու համար: Իսկ այնպիսի ընդհանրացնող պրեդիկատները, ինչպիսիք են ACT-ը, DO-ն, CAUSE-ը և BECOME-ը, ներկայացնում են բառային միավորին զուգորդվող կերպային դասերի ուրվագծումը: ԱՄՆ պաշտոնական հայտարարություններում ցեղասպանությունը ներկայացնող բայերը տարբաբաշխվում են բառային այնպիսի միավորների, որոնց ներկայացնող իրադրային կառույցներում արտապատկերված են *կորստի, մահվան, տառապանքի, տեղափոխության* իրավիճակներ արտահայտող միավորներ՝ իրենց ենթաիրադարձություններով, սակայն ստեղծված իրավիճակի պատասխանատուները չեն նշվում: Փոխարենը նշվում են պատմական թվականներ և այլևս գոյություն չունեցող կայսրությունը՝ ընդամենը որպես վայր: Ենթադրվում է, որ խոսողն իրազեկված է պատմության անցքերին, և որ հիշյալ թվականներին, հիշյալ կայսրության ժամանակաշրջանում և վայրում տեղի է ունեցել որոշակի իրադարձություն:

Եզրակացությունների մեջ ամփոփվում են հետազոտության տեսական և գործնական արդյունքները: Մասնավորապես ներկայացվում են *իրադարձությունների* որպես քերականական միավորներ լինելու փաստը և դրա իմաստաշարահյուսական արտապատկերման միջոցները ժամանակակից լեզվաբանական տեսություններում: Այնուհետև արդեն գործնականում ներկայացնում ենք ԱՄՆ պաշտոնական հայտարարություններում տվյալ իրադարձությունների արտապատկերումը և ԱՄՆ քաղաքական խոսույթի կաղապարումը:

- Ժամանակակից լեզվաբանական տեսություններում իրադարձությունները դիտվում են որպես քերականական միավորներ և մեր կողմից ուսումնասիրված տեքստերում խոսքային իրադարձությունները վերաբերում են համատեքստային այն պայմաններին, որոնցում կաղապարվում են 1915 թվականի իրադարձությունները: Այստեղ արժևորվում է քաղաքական խոսույթի կաղապարումը ճանաչողական կաղապարների հայեցակետից:

- Ցեղասպանության ճանաչման գործընթացների համատեքստում հնարավոր է տարանջատել խոսույթի երեք տեսակներ՝ հաստատող, ժխտող և խուսանավող՝ հիմք ընդունելով Ս. Ջոյանի առաջարկած սահմանումները: Խուսանավող խոսույթի ուսումնասիրությունները դեռևս նորույթ են գիտության մեջ, ուստի կարող ենք եզրակացնել, որ այն պետք է դառնա հատուկ ուսումնասիրության և արձագանքի առարկա: Մեր վերլուծությունն իր հերթին թույլ է տալիս զարգացնել ու ավելացնել խուսանավող խոսույթի դրսևորման եղանակները: Նկատի ունենալով վերոնշյալը՝ կարելի է եզրակացնել, որ ԱՄՆ գաղափարախոսությամբ ամբողջացված խոսույթը խուսանավող խոսույթի ցայտուն օրինակն է, իսկ այս խուսանավելու մեխանիզմներն արտահայտվում են իրադրային կաղապարների վերլուծության միջոցով՝ իրադարձությունների

խմաստաբանության շրջանակներում, թեմատիկ դերերի և պարագայական կապակցությունների ներկայացմամբ: Լեզվական տեքստը հանդես է գալիս որպես մակերեսային կառույց, որը փոխակերպվելով դառնում է ձևականացված իմաստատրամաբանական կաղապար, որով բացահայտվում է տվյալ մակերեսային կառույցի արտապատկերը: Այս տեքստի ընկալումը կատարվում է խորքային կառույցի հիման վրա՝ հաշվի առնելով չարտահայտված՝ ենթադրյալ ու համատեքստային նշանակությունները:

• ԱՄՆ Սենատի վճիռ-որոշումներում, հուշագրություններում ու նախագահական ուղերձներում ներկայացված փաստերը՝ մարդկանց սարսափելի կացությունը, 1915 թվականին տեղի ունեցած իրադատությունների դաժանության և անզթության գործողությունների նկարագրությունը բացահայտ (explicit) ձևով արտապատկերվում են իրադարձությունների կառուցվածքային և իմաստաբանական վերլուծությունների միջոցով: Այս առումով կիրառում ենք նաև իրավիճակային քերականության որոշ սկզբունքներ, որոնք բացահայտում են, թե ինչպես են մակերեսային կառույցները մեկնաբանվում խորքային կառույցում: Իսկ խորքային կառույցի միջոցով հնարավոր է դառնում վերհանել ենթադրյալ իմաստները և առաջարկել դրանց բացահայտ մեկնաբանությունը:

• Ցեղասպանության հասկացությունն իր լայն ու նեղ իմաստներով ներառում է իրադարձությունների մի շարք, որոնք ներկայացվում են *մահ, տառապանք* և *տեղափոխություն* հասկացությոներով: Այս հասկացությոները ներկայացվում են բառային տարբեր միավորներով, որոնք համապատասխանաբար ներկայացնում են *մահվան, տառապանքի* ու *տեղափոխության* իրադարձությունները՝ իրենց ենթաիրադարձություններով: Ըստ մեր վերլուծության՝ տվյալ իրադարձությունները ներկայացնող բայերը տարրաբաշխվում են մի կառույցի, որը կազմված է այնպիսի պրեդիկատներից, ինչպիսիք են DO, CAUSE, BECOME պրեդիկատները: Բայական տարրաբաշխումը ներկայացվում է շարահյուսական կառուցվածքային ծառով՝ Ջ. Մքքոլիի առաջարկած հականիշության սկզբունքով՝ ՄԱՀ (BECOME NOT ALIVE), ՏԱՌԱՊԱՆՔ (BECOME NOT SAFE/RELIEVED), ՏԵՂԱՓՈՒՄՈՒԹՅՈՒՆ (BECOME NOT STAYED): Իմաստաշարահյուսական հարաբերությունների տեսակետից այստեղ ուրվագծվում են իմաստի և վերաբերելիի հարաբերությունները: Իմաստը բառային հարաբերությունն է, այսինքն՝ *սպանել, կոտորել, տեղահանել* բառայոները, որոնցում սպանության, կոտորածի ու տեղափոխության գործընթացները մատնանշող իմությունները թույլ են տալիս որոշել այն ասությունների իմաստաբանական կառուցվածքները, որոնցում առկա են այդ բառայոները, իսկ վերաբերելիության հարաբերությունը սահմանվում է համատեքստում:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Հակոբյան Ս. Իմաստաբանական իրադարձությունների դերն ու նշանակությունը լեզվաբանության մեջ // Բանբեր, Բանասիրություն 1(28) «ԵՊԼՀ Լինգվա հրատ.» Երևան 2013, էջ 230 -238

2. Հակոբյան Ս. The semantic analyses of Armenian Genocide in the American political discourse // Ցեղասպանագիտական հանդես N 2(1) Հայոց ցեղասպանության թանգարան-ինստ. հրատ, Երևան 2014, 135-144 էջ

3. Հակոբյան Ս. Ցեղասպանության ճանաչման խոսույթային ուղմավարությունները (ԱՄՆ պաշտոնական խոսույթի հիման վրա)// Բանբեր, Բանասիրություն, 1(32) «ԵՊԼՀ Լինգվա» հրատ.Երևան 2015, էջ 193-205

4. Հակոբյան Ս. Իրադարձությունները որպես քերականական օբյեկտներ (ԱՄՆ խոսույթում ներկայացված 1915 թվականի իրադարձությունների լեզվական ուսումնասիրություն) // Բանբեր, Բանասիրություն, 1(32) «ԵՊԼՀ Լինգվա» հրատ., Երևան 2015, էջ 206-219

Акопян Сона Карапетовна

СОБЫТИЕ И ЕГО СЕМАНТИКО-СИНТАКСИЧЕСКОЕ ОТРАЖЕНИЕ В ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ (НА ПРИМЕРЕ ОФИЦИАЛЬНОГО ДИСКУРСА США О СОБЫТИЯХ 1915г.)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 – “Общее и сравнительное языкознание”

Защита состоится 06 июня 2016г. в 15⁰⁰ часов, на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка имени Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

Целью настоящей диссертационной работы является выявление понятия *событие* и представление способов его отражения в политическом дискурсе США.

Актуальность избранной темы во первых обусловлена переосмыслением ряда проблем когнитивной лингвистики формировавшиеся в области лингвистики в последнее время и изучением нового лингвистического направления. Впервые в армянской лингвистике событие рассматривается как грамматическая единица, как языковой способ, который дает возможность проанализировать и описать глубокий смысл предложения. Во вторых, исследование семантики событий позволяет идентифицировать смысл дискурса соответствующего той или иной ситуации: события 1915 года, как грамматические единицы, отражены в политическом дискурсе США, а различные исследования в области геноцидоведения обусловленные 100-ой годовщиной геноцида армян приобретают большое значение.

Структура работы обусловлена поставленными целью и задачами исследования. Диссертация состоит из введения, трех глав, заключения, документации и официальных решений, приложения содержащего выступления президентов, библиографического списка и списка других источников анализируемого материала.

Во введении представлена общая характеристика диссертационной работы.

В первой главе – “События и способы их отображения” - рассмотрен тот факт, что в лингвистических теориях события рассматриваются как грамматические единицы. Кроме того, здесь представлены определения и описания событий данные различными лингвистами, способы их анализа, аспектная структура значения глагола и классификация событий.

Вторая глава диссертации - “Анализ политического дискурса и моделирование политического дискурса США” - состоит из трех подразделов. В

этой главе представлены различные методологии дискурс анализа, в частности сделана ссылка на аналитические методы, контекстные и ситуационные модельные понятия сделанные Т. Дейком. Мы рассмотрели различные документы, опубликованные Соединенными Штатами Америки, ежегодные президентские заявления, которые относятся к историческим событиям 1915 года. Более тщательно представлен тип маневренного дискурса, который до сих пор является новинкой в изучении дискурса.

Третья глава работы - “Ситуационный анализ американских официальных заявлений относительно событий 1915 года” - полностью представляет собой детальный анализ событий 1915 года в политическом дискурсе США. В решениях Сената США представлено ужасное положение людей, а структурно-семантический анализ событий позволяет выявить основную структуру дискурса. Моделирование текста дискурса обеспечивает визуализацию глубинной семантической структуры событий, их топографической структуры, т.е. времени и места произнесения официальных заявлений, а также визуализацию их ментальной структуры – знаний, целей, отношений и т.д.

В американском политическом дискурсе события 1915г. в основном представлены в рамках трех лексических концептуальных структур: в первой структуре исследован концепт *смерть*, во второй – концепт *страдание*, а в последней структуре мы рассмотрели концепт *перемещение*.

В заключении даются основные теоретические и практические выводы исследования. В частности представлен факт *события* как грамматической единицы и способы его семантико-синтаксического отображения в теориях современной лингвистики. Затем мы практически представляем отображение событий 1915г. в официальных заявлениях США и моделирование американского политического дискурса

SONA KARAPET HAKOBYAN

THE EVENT AND ITS SEMANTIC_SYNTACTIC REPRESENTATION IN THE POLITICAL DISCOURSE (IN THE EXAMPLE OF THE US OFFICIAL DOCUMENTS ON 1915 EVENTS)

Thesis for the degree of candidate of philological sciences, specially 10.02.02-
”General and Comparative Linguistics”

Defense will be held on 06 June, 2016 at 15⁰⁰, at the session of Specialized Council on Linguistics 019 of HAC in the Institute of Language after Hr. Acharyan NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich str. 15).

The **main objective** of the dissertation is to reveal the idea of event and present its representative means in the US political discourse. The **novelty** of the dissertation is in the re-significance of many linguistic problems from the cognitive point of view. In the dissertation a completely new linguistic field is being studied. In the Armenian linguistic tradition the idea of event is considered as a grammatical unit and linguistic mean which enables to analyze and represent the deep meaning of the sentence. The study of event semantics gives an opportunity to reveal the meaning of discourse corresponding to the particular situation. The events of 1915 as grammatical objects are represented in the USA political discourse and taking into account the Armenian genocide centennial different studies concerning to the genocide are greatly signified.

The **structure** of the dissertation is conditioned by the objectives and issues of this very study. It consists of introduction, three chapters, conclusions along with the appendixes of containing factual and official materials, and bibliography.

In the **introductory** part the general character of the study is presented. Different theoretical approaches and definitions are touched upon according to which we tried to realize our analyses.

In the first chapter entitled "**The event and the means of its representation**" we study the events as grammatical objects in the linguistic theories. Different definitions, representative and analytical means along with events' classification and aspectual structure are touched upon.

The second chapter entitled "**The analysis of political discourse and the USA political discourse modeling**" consists of three chapters. Here we present different methodologies of discourse analysis, particularly paying attention to the analytical methods by T. Dijk. The ideas of context and event models are being discussed as well. We tried to study the US official documents and annual presidential statements touching upon the events of 1915. The maneuvering type of discourse is studied, which is a novelty in the Armenian linguistic studies.

The third chapter entitled "**Eventual analyses of the US official documents touching upon the events of 1915**", thoroughly presents deep semantic event analyses of the US official documents and resolutions. In their official discourse they represent the deplorable conditions of people and the structural-semantic analyses of the events enable us to reveal the deep structure of the text. The modeling of the texts gives us an opportunity to represent the deep semantic structure of the events, topological structure, i.e. the time and place of the utterance, as well as the opinions of the participants (judgements, attitudes, beliefs). In the US political discourse the events of 1915 are presented within the framework of three lexical conceptual structures.; the concept of death, the concept of displacement, the concept of suffering.

In the concluding parts, the theoretical and practical results of study are presented. Accordingly the events are considered to be as grammatical objects and have their place in the modern linguistic theories. In our study we presented analyses of the US official documents from the event semantics and discourse analyses point of view.